ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

20 օգոստոս 2020թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Աշոտ Պապյանի դիմումի վերաբերյալ

Հարգելի պարոն Բալասյան

Ձեզ է ներկայացվում համայնքի սեփականություն համարվող բնակելի ֆոնդի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 20-ի նիստի N06 արձանագրությունը:

Զեկուցող՝ Միշա Եղիազարյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 2-704/9 1958/20
«20» 08 2020 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 06/20
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ, ԲՆԱԿԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Բյուրեղավան 20 օգոստոսի 2020 թ.

Նիստին մասնակցում էին՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N44-Ա որոշմամբ ստեղծված համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Միշա Եղիազարյան - համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Արգամ Շառյան- «Բյուրեղավան» համատիրության նախագահ,

Վոլոդյա Հայրապետյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Կարինե Բաղդասարյան- համայնքապետարանի աշխատակազմի գործավար,

Նիստի օրակարգի հարցը

Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 84 և 85 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 73 և 73/1 բնակարաններ) բնակիչ Աշոտ Գարեգինի Պապյանի դիմումի վերաբերյալ:

Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Միշա Եղիազարյան:

Միշա Եղիազարյանը ներկայացրեց, որ 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 84 և 85 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 73 և 73/1 բնակարաններ) հասցեի բնակիչ Աշոտ Գարեգինի Պապյանը դիմում-հայտարարություն է ներկայացրել Բյուրեղավանի համայնքապետարան Բյուրեղավան քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի «Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 73 և 73/1 բնակարաններն անհատույց Աշոտ Պապյանի ընտանիքին օտարելու մասին» N76-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Լսեցին՝ հանձնաժողովի անդամ Վոլոդյա Հայրապետյանին:

Նա ներկայացրեց, որ Աշոտ Գարեգինի Պապյանի 2020 թվականի օգոստոսի 14-ի դիմումը (Դ-1456/20) ուսումնասիրվել է և պարզվել, որ Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի N76-Ա որոշման մեջ և Բյուրեղավան համայնքի 2-րդ փողոցի 49 շենքի 73 և 73/1 բնակարանների սեփականության վկայականներում կա բնակարանների մակերեսների անհամապատասխանություն (ավագանու որոշման մեջ համապատասխանաբար գրված է 14.11քմ և 14.16քմ, իսկ վկայականներում՝ 14.12քմ և 13.81քմ), ինչպես նաև Աշոտ Գարեգինի Պապյանը ներկայացրել է դիմում-հայտարարություն՝ ընտանիքի անդամների ստորագրությամբ, որ բնակարանները անհատույց օտարեն միայն որդուն՝ Աբգար Աշոտի Պապյանին:

Հանձնաժողովը առաջարկեց՝ հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 84 և 85 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 73 և 73/1 բնակարաններ) բնակիչ Աշոտ Գարեգինի Պապյանի դիմումը և ավագանու որոշման ու վկայականներում առկա տարբերությունները՝ Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի N76-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Միշա Եղիազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արգամ Շառյան

_____ Վոլոդյա Հայրապետյան

_____ Կարինե Բաղդասարյան